

1. ԱՍՊԻՐԱՆՏՈՒՐԱՅԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆԸ

- 1.1. Յուրաքանչյուր ուսումնական տարվա սկզբից առնվազն 6 ամիս առաջ ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը հաստատություններից ստացած հայտերի հիման վրա, սահմանված կարգով, ՀՀ կառավարության հաստատմանն է ներկայացնում համապատասխան ուսումնական տարվա ասպիրանտուրայի ընդունելության տեղերը:
- 1.2. Համալսարանը ամբիոններից ստացած համապատասխան հիմնավորումների (գիտական կադրերի պատրաստման) արդյունքում հայտերը ներկայացնում է ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն:
- 1.3. Ասպիրանտուրայի ընդունելությունը՝ առկա ուսուցմամբ և պետության կողմից ուսանողական նպաստի ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (այսուհետ՝ անվճար) պարտադիր զինվորական ծառայությունից տարկետման իրավունքով տեղերի համար, իրականացվում է համապատասխան տարվա ժամանակահատվածի գորակոչը կազմակերպելու մասին ՀՀ կառավարության որոշմամբ նախատեսված ժամկետներում:
- 1.4. Պետության կողմից ուսանողական նպաստի ձևով ուսման վարձի մասնակի գեղջի կիրառման իրավունքով (այսուհետ՝ վճարովի) տեղերի համար ասպիրանտուրայի և հայցորդական համակարգի ընդունելությունն իրականացվում է յուրաքանչյուր տարվա սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին:
- 1.5. Համալսարանը ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից ստացված գրության հիման վրա պաշտոնական կայքում և մամուլում տալիս է հայտարարություն համապատասխան մասնագիտություններով անվճար, պարտադիր զինվորական ծառայությունից տարկետման իրավունքով և վճարովի ընդունելության տեղերի և ժամանակահատվածի վերաբերյալ:
- 1.6. Մրցութային կարգով ասպիրանտուրա են ընդունվում մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի կրթական աստիճան ունեցող անձինք:
- 1.7. Ասպիրանտուրա ընդունվելու համար անձի կամ նրա լիազորած անձի կողմից Համալսարանի ռեկտորի անունով ներկայացվում է դիմում (Հավելված 1)՝ կցելով հետևյալ փաստաթղթերը.
 - 1.7.1. անձնագրի և սոցիալական քարտի բնօրինակներ և պատճեններ (բնօրինակները վերադարձվում են դիմումը լրացնելուց հետո),
 - 1.7.2. ինքնակենսագրություն,
 - 1.7.3. երեք լուսանկար՝ 3x4 չափի,
 - 1.7.4. անձնական թերթիկ,
 - 1.7.5. բակալավրի և մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի դիպլոմների ու դրանց հավելվածների բնօրինակներ և պատճեններ (բնօրինակները հետ են վերադարձվում դիմումը լրացնելուց հետո), (օտարերկրյա պետություններում բարձրագույն կրթություն ստացածների համար՝ փաստաթուղթ նրանց կրթության համարժեքության մասին),
 - 1.7.6. «Օտար լեզու», «Ինֆորմատիկա և տեղեկատվահաղորդակցական հիմունքներ» առարկաների ատեստավորման վկայականներ կամ դրանց համապատասխան տեղեկանքներ,
 - 1.7.7. ընտրված մասնագիտությամբ հրատարակված առնվազն մեկ գիտական աշխատանքի պատճեն կամ առնվազն 20 տպագրական էջի սահմաններում գիտական ռեֆերատ՝ մասնագիտական ամբիոնի գրավոր դրական գրախոսականի հետ միասին,

- 1.7.8. գիտական ղեկավարի գրավոր համաձայնությունը ղեկավարման վերաբերյալ (Հավելված 2),
- 1.7.9. քաղվածք աշխատանքային գրքույկից (առկայության դեպքում):
- 1.8. Ասպիրանտուրայի ընդունելության կազմակերպման համար Համալսարանի ռեկտորի հրամանով ձևավորվում է ընդունող հանձնաժողով՝ ռեկտորի կամ պրոռեկտորի նախագահությամբ:
- 1.9. Ասպիրանտուրայի ընդունելության մասնագիտական քննության անցկացման համար Համալսարանի ռեկտորի հրամանով ձևավորվում է մասնագիտական քննական հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով): Հանձնաժողովի կազմում ընդգրկվում է տվյալ մասնագիտական բնագավառի գիտական աստիճան կամ գիտական կոչում ունեցող երեքից հինգ մասնագետ:
- 1.10. Ասպիրանտուրայի ընդունելության մասնագիտական քննության անցկացման ժամանակացույցը հաստատում է Համալսարանի ռեկտորը և ներկայացնում է ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն:
- 1.11. Համալսարանի հայտարարությունների համար նախատեսված վայրում փակցվում և/կամ պաշտոնական կայքում տեղադրվում են մասնագիտական քննության
- 1.11.1. անցկացման օրվա, տեղի և ժամի վերաբերյալ տեղեկատվություն՝ քննությունը սկսելուց յոթ աշխատանքային օր առաջ,
- 1.11.2. հարցաշարը՝ մասնագիտական քննությունից առնվազն մեկ ամիս առաջ,
- 1.11.3. ընթացակարգային պահանջները՝ սահմանված սույն կանոնակարգով:
- 1.12. Դիմորդին մասնագիտական քննությանը մասնակցելու թույլտվություն տալիս է Համալսարանի ընդունող հանձնաժողովը՝ ընդունելության համար պահանջվող փաստաթղթերի ստուգումն իրականացնելուց հետո:
- 1.13. Ստորև նշված օտար լեզուների համար անհրաժեշտ նվազագույն միավոր է համարվում՝
- անգլերենից՝ «TOEFL» (iBT) (այԲիԹի)՝ 46 և «IELTS» (ԱՅԼԹՍ)՝ 5.5 միավորը,
 - ֆրանսերենից՝ «TCF» (ԹիՍիԷՖ)՝ 200 միավորը,
 - գերմաներենից՝ «on DaF» (օն ԴաՖ)՝ 60 միավորը:
- Այն դիմորդները, որոնց համար մասնագիտական առարկաներ են անգլերենը, ֆրանսերենը կամ գերմաներենը, քննություն են հանձնում այլ օտար լեզվից:
- 1.14. «Ինֆորմատիկա և տեղեկատվահաղորդակցական հիմունքներ» առարկայի համար անհրաժեշտ նվազագույն միավոր է համարվում 25 միավորը:
- 1.15. Մասնագիտական քննության հարցաշարը, որն ընդգրկում է նախորդ կրթական աստիճանների ծրագրային նյութը, կազմվում է Համալսարանի մասնագիտական ամբիոնների և հաստատվում Համալսարանի ռեկտորի կողմից:
- 1.16. Հրապարակված հարցաշարից մասնագիտական քննությունից 2 աշխատանքային օր առաջ Հանձնաժողովի նախագահի կողմից կազմվում են հարցատոմսեր, որոնք հաստատվում են Հանձնաժողովի նախագահի ստորագրությամբ և Համալսարանի կնիքով: Հարցաշարերը և հարցատոմսերը յուրաքանչյուր տարի վերանայվում են:
- 1.17. Դիմորդը քննության է ներկայանում անձը հաստատող փաստաթղթով:
- 1.18. Ելնելով մասնագիտության առանձնահատկությունից՝ մասնագիտական քննության անցկացման ձևը (գրավոր կամ բանավոր) սահմանում է ընդունող հանձնաժողովը:
- 1.19. Բանավոր քննությունը ձայնագրվում է, և ձայնագրությունը պահպանվում է արդյունքների հրապարակումից հետո առնվազն 24 ժամ: Գրավոր քննության աշխատանքները պահվում են դիմորդի անձնական գործում:
- 1.20. Մասնագիտական քննության արդյունքները գնահատվում են 20 (քսան) միավորանոց սանդղակով: Քննությունը համարվում է հանձնված, եթե դիմորդը ստացել է առնվազն 13

(տասներեք) միավոր: Գիտելիքների գնահատման մասին որոշումն ընդունվում է Հանձնաժողովի անդամների կողմից նշանակված գնահատականների միջին թվաբանականի հիման վրա:

- 1.21. Մասնագիտական քննության արդյունքների բողոքարկման ընթացակարգը հետևյալն է.
 - 1.21.1. Դիմորդը կարող է մասնագիտական քննության գնահատականը բողոքարկել Հանձնաժողովին արդյունքների հրապարակումից հետո՝ մեկ ժամվա ընթացքում՝ Հանձնաժողովի նախագահին ներկայացնելով գրավոր դիմում-բողոք, որը քննարկվում է նույն օրը:
 - 1.21.2. Բողոքարկմանը մասնակցում են տվյալ Հանձնաժողովի անդամ չհանդիսացող Համալսարանի վարչական անձնակազմի, Ուսանողական գիտական ընկերության և/կամ Ուսանողական խորհրդի ներկայացուցիչներ, որոնց թեկնածությունները նախապես հաստատվում են Համալսարանի ռեկտորի կողմից: Բողոքարկման հանձնաժողովի նախագահը նույն Հանձնաժողովի նախագահն է:
 - 1.21.3. Դիմորդի ներկայությամբ ուսումնասիրվում և քննարկվում է գրավոր աշխատանքը, իսկ բանավոր քննության դեպքում՝ լսվում ձայնագրությունը:
 - 1.21.4. Բողոքարկման արդյունքում բաց քվեարկությամբ, Հանձնաժողովի անդամների և ներգրավված անձանց ձայների պարզ մեծամասնությամբ, կայացվում է որոշում՝
 - գնահատականը թողնել անփոփոխ,
 - գնահատականը բարձրացնել:
 - 1.21.5. Ընդունված որոշման վերաբերյալ կազմվում է արձանագրություն, որը ստորագրվում է Հանձնաժողովի նախագահի, Համալսարանի վարչական անձնակազմի, Ուսանողական գիտական ընկերության, Ուսանողական խորհրդի ներկայացուցիչների և դիմորդի կողմից:
 - 1.21.6. Նշված անձանցից որևէ մեկի՝ ընդունված որոշման վերաբերյալ անհամաձայնության դեպքում գրավոր ներկայացվում է հատուկ կարծիք, որը կցվում է արձանագրությանը:
 - 1.21.7. Գնահատականի վերանայման դեպքում կազմվում է համապատասխան արձանագրություն:
 - 1.21.8. Մասնագիտական քննության գնահատականը կարող է բողոքարկվել դատարանում՝ օրենքով սահմանված կարգով:
- 1.22. Մասնագիտական քննության վերահանձնում չի թույլատրվում:
- 1.23. Ասպիրանտուրայի մասնագիտական քննության արդյունքն ուժի մեջ է Համալսարանի տվյալ ուսումնական տարվա ընդունելության քննության ընթացքում:
- 1.24. Մրցույթի արդյունքում ասպիրանտուրա ընդունվում է մասնագիտական քննությունից առավելագույն միավոր ստացած անձը:
- 1.25. Մասնագիտական քննությունից ստացած հավասար գնահատականների դեպքում հաշվի են առնվում հետևյալ ցուցանիշները՝ ըստ հերթականության՝
 - 1.25.1. մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի դիպլոմի միջին որակական գնահատականը,
 - 1.25.2. բակալավրի և մագիստրոսի դիպլոմների միջին որակական գնահատականների գումարը,
 - 1.25.3. հրատարակված գիտական աշխատանքների թիվը,
 - 1.25.4. միջազգային կամ հանրապետական ուսանողական առարկայական մրցույթներում կամ օլիմպիադաներում ստացած դիպլոմները կամ միջազգային գիտաժողովներին մասնակցությունը (զեկուցումները):
- 1.26. Ընդունող հանձնաժողովը մրցույթի արդյունքների հիման վրա յուրաքանչյուր դիմորդի

վերաբերյալ ընդունում է համապատասխան որոշում:

- 1.27. Ասպիրանտուրա ընդունվելու կամ մրցույթով չանցնելու վերաբերյալ որոշման մասին դիմորդներն իրազեկվում են մասնագիտական քննությունից հետո 7 (յոթ) աշխատանքային օրվա ընթացքում:
- 1.28. Ասպիրանտի հրամանագրումը կատարվում է Համալսարանի ռեկտորի հրամանով՝ ասպիրանտի հետ կնքելով համապատասխան պայմանագիր (Հավելված 3):
- 1.29. Առկա ուսուցման ձևով և անվճար հիմունքներով ասպիրանտուրա ընդունվածներին Համալսարանի ռեկտորի հրամանով տրվում է սահմանված չափի պետական կրթաթոշակ՝ ընդունման օրվանից. հայագիտական ուղղվածությամբ մասնագիտություններով՝ 65.000 ՀՀ դրամ, բնագիտական և այլ մասնագիտություններով՝ 60.000 ՀՀ դրամ, տնտեսագիտական և իրավաբանական մասնագիտություններով՝ 55.000 ՀՀ դրամ: